ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1427 04.07.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏՄԲ
ՄՏՊՑ № 2848
«08» 07 14

Հարգելի պարոն Գասպարյան,

22.11.2013թ-ին թիվ 2621/1387 գրությամբ Դիտորդական խումբը առաջարկել էր, որպեսզի ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի և Վաղարշապատի ՁՊՎ-ներում համալրվի օրվա հերթապահ ոստիկանների հաստիքը՝ դարձնելով օրական երկու հոգի գերծանրաբեռնված աշխատանքի պատճառով:

20.12.2013թ-ի թիվ 2/2-1-3626 գրությամբ տրվել էր մեկնաբանություն, որ ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի և Վաղարշապատի ՁՊՎ-ներում հերթապահ ոստիկանների երկուական հաստիքները ավելացնելու հարցը կքննարկվի ՀՀ Ոստիկանությունում:

Մինչ օրս նշված հարցի վերաբերյալ չի տրվել մեկնաբանություն, և տվյալ մարզի ՁՊՎ-ները իրենց գործունեությունը ծավալում են նույն՝ մեկական հաստիքներով:

Միաժամանակ հարկ ենք համարում տեղեկացնել, որ Դիտորդական խումբը սույն թվականի հունիս ամսին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի բաժնի ՁՊՎ արձանագրել է, որ սույն թվականի հունվարի 1-ից կրճատվել է տվյալ ՁՊՎ-ի օրական հերթապահություն իրականացնող երկու ոստիկաններից մեկի հաստիքը, արդյունքում՝ նախկին 8 հոգով հերթապահություն իրականացնող հաստիքները կրճատվել են մինչև 4 հոգի, այն դեպքում, երբ տվյալ Տարոնի ՁՊՎ-ն սպասարկում է միաժամանակ 3 բաժիններ՝ Տարոնի, Բազումի և Գուգարքի:

«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՊՑ № 5382
«08» 07 2014թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Արդյունքում, Դիտորդական խմբի առաջարկը ոչ միայն չընդունվեց, այլ ավելի վատ ելդրադարձ ունեցավ, տվյալ դեպքում, Տարոնի բաժնի ՁՊՎ-ի վրա, որովհետև ներկայիս անբաբեռնված ՁՊՎ-ում 24 ժամ հերթապահություն է իրականացնում մեկ ոստիկան:

Ի հավելում, տեղեկացնենք, որ ՀՀ մարզային ՁՊՎ-ներից՝ ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Լխուրյանի ՁՊՎ-ում օրական երկու ոստիկան են հերթապահություն իրականացնում:

Այսպիսով՝ խնդրում ենք տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-_____ <<____>> _____ 2014թ.

2/2-1-1768
21.-07.14թ

Ձեր 04.07.2014թ. թիվ 2621/1427 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ Ձեր 22.11.2013թ. թիվ 2621/1387 գրությամբ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի և Վաղարշապատի բաժինների ՁՊՎ-ների հերթապահ ոստիկանների հաստիքները կրկնապատկելու վերաբերյալ արված առաջարկին ՀՀ ոստիկանությունը 20.12.2013թ. թիվ 2/2-1-3626 գրությամբ պատասխանել է, որ նշված հարցը կքննարկվի ՀՀ ոստիկանությունում, սակայն առաջարկությունների վերաբերյալ դիտորդների խմբին լրացուցիչ մեկնաբանություններ տալը ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի գործունեության կարգ>>-ով նախատեսված չէ:

Այնուամենայնիվ տեղեկացվում է, որ ՀՀ ոստիկանությունում քննարկվել է ոստիկանության Երևան քաղաքի ու մարզային վարչությունների ՁՊՎ-ների գործունեության վերաբերյալ ներկայացված 2012թ. և 2013թ. հաշվետվությունները և ելնելով միջին ծանրաբեռնվածությունից՝ ՁՊՎ-ներում պահվող անձանց քանակից, ՀՀ ոստիկանության պետի 16.01.2014թ. թիվ 106-Ա հրամանով ոստիկանության Արմավիրի ու Վաղարշապատի բաժինների հաստիքները ավելացվել են ևս չորսով, իսկ Տարոնի բաժնի ՁՊՎ-ի հերթապահ ոստիկանների հաստիքները կրճատվել են չորսով, քանի որ ՁՊՎ-ում պահվող անձանց ծանրաբեռնվածությունը ցածր է միջին տարեկան ծանրաբեռնվածությունից, իսկ Ախուրյանի բաժնի ՁՊՎ-ում պահվող անձանց ծանրաբեռնվածությունը՝ բարձր է:

Հարկ է նշել, որ հաստիքների ավելացումը և կրճատումը կատարվել է, ոչ թե տարածքային ստորաբաժանումների ՁՊՎ-ների կողմից սպասարկվող բաժինների

քանակից, այլ ոստիկանության ենթակա ստորաբաժանումների ՁՊՎ-ներում պահվող անձանց քանակի տարեկան միջին ծանրաբեռնվածությունից:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ դիտորդների խումբը 2014թ. ընթացքում ոչ մի այցելություն չի կատարել ոստիկանության Արմավիրի ու Վաղարշապատի բաժինների ՁՊՎ-ներ: Արդյունքում դիտորդների խումբը խախտելով ՀՀ ոստիկանության պետի 2005թ. հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանի 14-րդ և խմբի գործունեության էթիկայի կանոնների 4.8 կետերի պահանջները՝ այցելություններ չկատարելով վերը նշված բաժինների ՁՊՎ-ներ մեկնաբանություններ է պահանջում ՀՀ ոստիկանությունից: Այնինչ, ոստիկանության Արմավիրի բաժնի ՁՊՎ-ում 29.04.2014թ-ից և ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ-ում 29.05.2014թ-ից հերթապահությունը իրականացվում է երկուական ոստիկանների կողմից:

Բացի այդ, ՁՊՎ-ներում հերթապահությունը իրականացվում է ոստիկանության ստորաբաժանումների ղեկավարության կողմից նախօրոք հաստատված գրաֆիկի համաձայն և այդ հարցը դուրս է դիտորդների խմբի իրավասության սահմաններից:

ՀՀ ոստիկանության շտաբ